

ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ

ՄԱՅՐ ԸԼԼԱԼԸ ԴԺՈՒԱՐ ԲԱՆ Է

որովհետև Մայրը զոհողութեան խորհրդանշան է:

Ինչո՞ւ

Ոչ թէ որովհետև ցաւով զաւակ կը ծնանի:

Հապարաւոր տարիներ առաջ, Եւան արգիլուած խնձորը կերեր Եղեմի պարտէպին մէջ: Այսքան թեթեւ յանցանքի մը համար՝ բաղդատած այսօրուան կիներու գործած յանցանքներուն, Աստուած Եւան պատժած է եւ իրմէ ետքը եկող բոլոր կին սերունդը: Բայց ի՞նչ յանցանք ունին այրերը, որոնք մաթերնիթէին դռան առջեւ հալ ու մաշ կ'ըլլան մինչ իրենց կինը իրենց զաւակը կը ծնանի: Մի նեղանաք, այլ գիտցէք որ այդ վայրկեանին որ զաւակը կը ծնանի եւ կինը մայր կ'ըլլայ, ան ինքզինք նոր իրականութեան մը առջեւ կը գտնէ:



Ի՞նչ է այդ իրականութիւնը:

Որ ինչ ալ պատահի տան մէջ՝ մայրն է յանցաւորը:

- Չաւակը դասերուն մէջ տկար է.- Մ'այրն է յանցաւորը: Ոչ թէ անուսինը զինք յանցաւոր կը նկատէ զաւակին ձախող վիճակացոյցին համար, այլ դպրոցէն ծնողական ժողովին ընդհանրապէս մայրը կը կանչուի եւ դաստիարակէն ալ կը յանդիմանուի անհոգութեան պատճառով:
- Եթէ տունը կոկիկ չէ, եթէ ճաշը համեղ չէ, եթէ զաւակիդ ախորժակը տեղը չէ, եթէ «չոճուխը» պաղ առած է, միշտ մայրն է յանցաւորը:
- Եթէ սպասուի ունիք եւ երեկոյեան ան տխուր դէմք մը կը ցուցնէ, մայրն է յանցաւորը:
- Հիւրերու ընդունելութեան մէջ որեւէ ձախողութիւն մը՝ անոր վրայ կը նետեն յանցանքը:
- Չաւակը վայ որ հիւանդանայ: Հայր, կեսուր, դրացիներ, նոյնիսկ բժիշկը մօր վրայ կը բեռցնեն զաւակին հիւանդանայուն պատճառը: Միշտ մայրն է անհոգը:

ՄԱՅՐ ԸԼԼԱԼԸ ԴԺՈՒԱՐ ԲԱՆ Է

Չաւակդ մոռցած է գիրքերէն մէկը, տունը կամ դպրոցը: Ո՞վ է յանցաւորը:

Չաւակդ դպրոցէն տուն կուգայ, գլուխը կը քերէ որովհետև մապերուն մէջ ոջիլ ինկեր է: Վստահ ըլլալով հանդերձ որ ոջիլը դպրոցէն բերէր է, յանցաւորը կրկին մայրն է:

Լաւ, վերջապէս աղջիկդ մեծցաւ եւ անուսնացուցիր: Աղջիկդ անուսնին կամ կեսուրմօր հետ սխալ վերաբերուեցաւ: Տակաւին բոլոր յանցանքը մօր վրայ կը բեռցուի: «Այդ մայրէն ասկէ լաւ աղջիկ չ'ելլեր», կ'ըսեն: Ի՞նչ ալ ընես չես վերջանար:

Ինչո՞ւ այդպէս կը պատահի: Որովհետև զաւակին սերն ու կապը՝ զինք կը տկարացնեն: Տան մէջ ամենէն տկար անձը կը դառնայ: Այսինքն նախ հայրը, ետքը զաւակը եւ ամենէն վերջը մայրը կըստանայ իր իրաւունքը, եթէ որեւէ իրաւունք մնացեր է իրեն:

Մայր ըսուածը ստիպուած է համբերող ըլլալ:

Ստիպուած է առաջին զոհողութիւն ընողը ըլլալ: Այդպիսին կը վերածուի ան՝ մայր դարձած վայրկեանէն: Եւ այս բոլորը, խնձոր մը ուտելուն համար, պտուղ մը որ աւելի այրեր կը սիրեն ուտել քան կիներ: Է՛, եթէ արգիլուած բայց կերած պտուղը, մանկօ կամ անասնա ըլլար, ի՞նչ պատիժով իր բարկութիւնը պիտի մեղմացնէր Աստուած: Ուրեմն փառք թող տան կիները որ այսպէս վերջացաւ խնդիրը իրենց եւ Ամենակալին միջեւ:

Մայրը զոհողութեան խորհրդանշան է, համբերութեան մարմնացում եւ սիրոյ աղբիւր: Դեռ ուր մնաց եթէ հայ մայր է:

ԻՍԿԱԿԱՆ ՄԱՅՐ ԸԼԼԱԼԸ ԴԺՈՒԱՐ ԲԱՆ Է